Հրանտ Մաթևոսյան

Խոտհունձ

Այդ ճիշտ է, որ գերանդին զնգում է խոտհարքի մեջ, լեռների ուսից արևը շողեր է նետում խոտհարքներին, պողպատե գերանդին շողերը ետ է նետում և թվում է, թե գերանդին կպավ շողերին զնգոցը դրանից ելավ: Հետո գերանդիի և արևի խաղ է լինում մինչև արևամուտ: Եվ ճիշտ է, որ արևամուտը գեղեցիկ է:

Այդ ճիշտ է, որ շոգ կեսօրին հնձվորի մտքով «Հով արեք, սարեր շան, հո՜վ արեք» է անցնում, եթերի ցածում լողացող ամպերը խոտհարքների վրայով քարշ են տալիս ստվերները և քարշ եկող ստվերի հետ թափառում է զովը, և ամեն հանդում մի զանգակ աղբյուր կա՝ հնձվորի սիրտը հովացնում է:

Այդ ճիշտ է, որ առավոտները փչում է հովիկը, իրիկունները՝ զեփյուռը, և խոտհարքները զմրուխտի են, և ծծուկ կոչվող ծաղիկը նեկտարահոտ է բուրում քուլաներով, որոնք քշվում են քամուց և մի հեռու, շատ հեռու տեղ, ուր նեկտարածաղկի նմուշ անգամ չկա, քիմքիդ է խփվում նեկտարահոտը. խոտհարքների վրայով քուլաները թափառում են՝ ինչպես ամպերը անտառի վրայով:

Այդ ճիշտ է, որ խոտհարքներն անսահման են և հովն այդպես էլ ծայրը չի գտնում, մոլորված մնում է նրանց մեջ:

Եվ ճիշտ է, որ այդ բոլորի՝ և՛ զմրուխտ խոտհարքների, և՛ զանգակ աղբյուրների, և՛ հովի ու զովի, և՛ ներքևի կուտապ-կուտապ անտառների, և եթերում հանգիստ նավող ամպերի, այդ ամբողջ անսահմանության տերը ազատագրված մարդն է, ազատագրված և՛ սեփական բռնադատիչներից (սեփականը չակերտներում) և՛

թուրք ոչնչացնողներից ու ցարական ոսկեկոճակ ասիմիլատորներից:

Այդ բոլորը ճիշտ է:

Բայց, տեր աստված, այնպես ծանր, այնպես ջարդող աշխատանք է խոտհունձը, որ այդ անսահմանությանը նայելիս ալարդ գալիս է: Ախար այդ անծայրության կեսը խոտհարք է և պիտի կտրես քիլ առ քիլ: Ախար հնձից հետո ցավով մկաններիդ տեղն ես սովորում քո մարմնի վրա:

Ութին, ութ անց կիսին լինում ես խոտհարքու : Բայց՝ արդեն հոգնած, որովհետև ոտքի վրա ես հնգից. այստեղ-այնտեղ խոտ ես պոկել կովիդ համար՝ ուղեղիդ մի անկյունում հազիվ զգալով ցայգալուսի խորհրդավորությունը: Ո՞նց է ջլատում այդ խորոմ-խորոմ «հունձը»:

Լա՞վ է սովխոզի խոտհարքում. միասին եք: Մեկի մոտ լայն ծորեր, մյուսի մոտ մի քիչ նեղ, մեկի մոտ գերանդին կտրիճավարի խաղացնելու փորձ և հրաժարումն, մյուսի մոտ՝ կախղլուխ է ոչնչի չնայելով պտտել: Նաեւ երգի մի տող արտաբերված մի հայտնի կատարողի նմանությամբ կամ՝ ինքնուրույն և շնորհքով: Դա երիտասարդությունն է, շատ որ չլինի՝ հրեն Պուլուզը Թիֆլիս մի վրացի է տեսել, կարող է ուրիշ տեղից էր եկել, բայց ազնիվ խոսք, Պուլուզը տեսել է, կհիշեն ու կծիծաղեն, կամ արտասանել կտան նրան իմացած միակ ոտանավորը:

</poem> Իմ լավ տատիկ, քաղցր տատիկ, Ես քեզ կարոտել եմ անչափ, անսահման, Ինչ կլինի, որ գիրս կարդաս, Վեր կենաս գաս Ըրեվան... </poem>

Սրանով, իհարկե, ոտանավորը չի վերջանում, քանի որ կա Պուլուզի ավելացրածը.

Ամիոնա՜... Կռո՜ւ-հո՜մ: Շա՜-հռո՜մ մա՜րշ: Ռա՜գ, դվա՜, ռա՜գ, դվա՜... Վի՜շի նոգի՜... Ֆո՜ւ, յոկի պալկի... վի՜շի, վի՜շի... այսքանն էլ բանակից է բերել Սպանդար Անտոնյանը: Ասել կտան ու լո՜ւրջ կլսեն: Ապա «գերազանց» կնշանակեն ու կծիծաղեն:

Այսինքն շատ էլ որ չլինի. անհոգությամբ մի կողմ կթողնեն միակ կովի հոգսը: Լա՜վ է սովխոզի խոտհարքում: Միասին ծիծաղում են:

Հետո՝ բանթող-մայրամուտ՝ և առավոտվա վազվզոցը: Մի խորորում խոտ, մի խորոմացվի տեղ... մի լա՛ս էլ, մի լա՛ս էլ՝ քանի դեռ աչքդ տեսնում է: Եվ նոր միայն դեպի տուն: Այնպես ջարդված ես լինում, որ ավելորդ են լինում սապոգները, ավելորդ են լինում ոտքերը և այն բոլորը ինչն զգում է հոգնությունը:

Ուզածդ տանը ռադիոընդունիչ կա: Հաղորդավար աղջիկը գյուղատնտեսության սիրելի աշխատողներին համերգ է խոստահում, և քիչ անց Երևանը ձգում է հորովել: Եվ այնտեղ, միկրոֆոնի մոտ, գոհ են. պատկերացնում են, որ գյուղատնտեսության սիրելի աշխատողի տանը մեղմ երգում է ռադիոն, տան տղամարդը՝ թիկն տված, հանգստանալով, լսում է երգը, իսկ կինը սավաններ է արդուկում ու կամաց ձայնակցում ռադիոյին:

Անջատիր:

Իսկ մկանները ցավում են: Լամպի սովորական պայծառությունը ջղայնացնող է: Կիսախավար է պետք և տղամարդու թավիշ ձայնով երգ՝ առանց նվագի, խառնվեն իրար, լողան առաստաղի տակ, կնոջ ձեռքի պես փաղաքշեն դեմքդ: Ցածրաձայն երգ է պետք:

Միացրու:

Այնտեղ, հյուսիսային լայնության այսինչ զուգահեռականների տակ, քաղաքը ծափահարում է. քաղաքը հայտնաբերել է Վան Կլիբեռն, քաղաքը գտնում է, որ նա աշխարհի միլիոն դաշնակահարների մեջ բոլորից տարբեր ու բոլորից նրբամտորեն է մեկնաբանում այսինչ երկը: Եվ երկրագնդի այսինչ լայնության ինչ-որ զուգահեռականի տակ քաղաքը որսում է նյուանսներ ու ծափահարում է, ինչպե՜ս է ծափահարում:

Անջատիր:

Ամենալավը քունն է: Եվ քունը այստեղ որոշակի կշիռ ունի: Գրասենյակում վաղվա առաջադրանքները մի քիչ ձգձգեցին կամ ուզեցիր լսել կարևոր մի

խոսակցություն, բայց անկարևոր բան դուրս եկավ, «հիմա մի փութ քնած կլինեի», ասում ես: Եվ ոչ ոք չի ծիծաղում: Այդ ոչ թե նրանից, որ Ահնիձորը դադարել է ծիծաղել մաշված սրամտություններից, այլ որ բոլորն էլ հոգնած են և բոլորն էլ «մի փութ քնած կլինեին»: Կստացվեր՝ հնձվորը, հավաքողը, դիզողը միասին վերցրած՝ այդքան փութ քուն:

Բաց նամակ

Ալավերդու շրջանի Աթանի-Ահնիձորի Ստ. Շահումյանի անվան սովխոզի դիրեկտոր ընկ. Գ. Եղիկյանին, Սովխոզների վարչությանը, Ալավերդու շրջանի ղեկավարներին, բայց ամենից շատ՝ Ստ. Շահումյանի անվան սովխոզի դիրեկտոր ընկ. Գ. Եղիկյանին:

Դուք բյուրոկրատ չեք իհարկե, տեսել եք, համաձայն եք, որ սապոգներն ավելորդ են լինում հնձից հետո: Համաձայն եք նաև, որ ավելորդ չպետք է լինեն, և աշխատանքը, թեկուզ և ամենածանրը, պետք է երգ լինի, թեթև լինի ինչպես խոտհունձ վերարտադրող սյուիտում: Դուք գիտեք նաև, որ այդպես կլինի միմիայն սյուիտում, որովհետև իրականությունը սյուիտ չէ: Բայց, ախար, պե՞տք է գոնե այնպես լինի, որ սյուիտի տարրերը իրականության մեջ լինեն: Ախար այդպես դարձնելու հնարավորությունը դուք լրիվ ունեք, ընկեր Եղիկյան: Ախար դրա համար չնչին բան է պահանջվում, ընկեր Եղիկյան: Ասեմ թե իհչ:

Թույլ տաք, որ մարդիկ ձի ունենան, աշխատանքի ձիով գնան-գան, քանի որ «Վոլգա» կամ տրամվայ չունեք: Եթե ձիուց, որպես կապիտալիզմ ծնողից, շատ եք վախենում, անցկացրեք ուրեմն տրամվայի գծեր՝ գյուղից դեպի բոլոր հանդերը:

Թույլ տաք, որ մարդիկ, ձեր սովխոզի մարդիկ, ունենան տասական ոչխար: Ես սա ասում եմ առանց չար դիտավորության, ասում եմ զուտ նրա համար, որ մածունը լավ ուտելիք է և հնձվորին, ձեր խոտհարքը հնձողին, վնաս չէր տա: Եվ, ազնիվ խոսք, ձեզ էլ վնաս չէր տա: Կով, ձա՛ռք աստծո, թույլատրում եք. թույլատրեք նաև խոտ՝ այդ կովի համար. թույլատրեք ոչ թե իրիկուն-առավոտ, խորոմ-խորոմ և ջլատելով հնձվորին, սեզոնում երեք-չորս օր: Այդպես՝ պետականորեն մտածող մարդուդ համար էլ լավ կլիներ, մասնավոր կովի

մզզոցով դես-դեն ընկնող բանվորի համար էլ: Գիտե՞ք ինչ հանգստություն էր աշխատավորի հոգուն այս ձմեռ դռներին այնպես ծանր-ծանր նստած խոտի դեզերը: Եվ գիտե՞ք այդ հանգստությունն ինչքան մեծ կլիներ, եթե անհանգիստ դես-դեն ընկնելով չէին հավաքած եղել այդ դեզերը: Հետո՝

Դուք իսկի չե՞ք մտածել, որ ձեր անտառները ուղղակի խոզաբուծարան են, և խոզ պահելը ո՛չ ձեզանից, ո՛չ բանվորից ոչինչ կխլեր: Ինչո՞վ վատ կլիներ, ասացեք խնդրեմ, եթե անտառի մարդիկ ձմեռը ուտեին խոզ անտառի բարիքը: Փորձեք ինքներդ էլ, խանձած խոզը գինու հետ՝ լավ է, և այնքան գոհ ես լինում աշխարհից. ուրեմն այդ խոզը քեզ վրա նստած է լինում կոպեկներ և մի ամբողջ ձմեռվա կուշտ կյանք է տալիս: Թույլատրեք պահել խոզ:

Այսքան:

Շատ չեղավ, չէ՞: Ձի, խոզ, ոչխար: Եթե հաշվի առնենք, որը դուք ապրում եք անասնակերի անսպառ ծովի մեջ, շատ չեղավ: Դուք հնձում եք խոտհարքների երեք մասի մե՞կ մասը: Թե՞ ավելի քիչ: Իսկ մնացա՞ծը: Մնացածը ոտքի վրա փտում-կորչում է. Թողեք հնձեն: Սովխոզը դրանից ինչո՞ւ պիտի տուժեր: Դուք ապրում եք աճարկուտում: Եվ աճարկուտը կա իր համար առանձին, դուք ձեզ համար առանձին: Ինչո՞ւ չպիտի աճարկուտը ծաղկի, բերք տա ձեզ համար:

Հետո, տնամերձ հողերը վերցրել քչացնում եք: Ախար շատն են քչացնում, ընկեր Եղիկյան, դուք քիչը ո՞նց եք քչացնում, ո՞ր խղճով: Ապա մի տեսեք այդ «շատով» այնքան կարտոֆիլ տալի՞ս է, որ մի ձմեռ մի ընտանիքի բավարարի: Եղա՞վ այդպես: Եթե եղավ, ապա, խնդրեմ, բանվորին այնքան աշխատավարձ տվեք, որ և՛ կարտոֆիլ գնի, և՛ կաղամբ, և՛ յուղ, և՛ միս, և՛ հագուստ: Դուք երկու-երեք ամիսը մեկ անգամ եք աշխատավարձ տալիս, տվածներդ էլ միայն հագուստի գին, և չեք թողնում, որ մարդիկ ունենան կարտոֆիլ, միս, յուղ, չեք թողնում, փաստորեն, մարդիկ ուտեն: Ինչո՞ւ չեք թողնում: Նրա համար, հա՞, որ սովխոզների կանոնադրության մեջ չի թույլատրվում, խոզ պահել, ձի պահել, 1500 մետրից ավելի հող ունենալ: Ասացեք, խնդրեմ, իսկ այդ կանոնադրության մեջ գրվա՞ծ է, որ երկու-երեք ամիսը մեկ անգամ են աշխատավարձ ստանալու և ամբողջ երեք ամսվանը հազար ռուբլի է լինելու: Չի գրված: Այդ դուք եք հնարել: Եվ՝ ո՞ր օրենքով: Սովխոզների կանոնադրության տառով, հա՞:

Այսքան:

Ես շատ բան չեմ ուզում. մի ժամանակ մարդիկ այդքան ուզել են և վերցրել զոռով: Հիմա քիչ բան է մնում. այդ էլ պիտի տրվի: Ես ուզում եմ... այ դուք ունեք կարմիր երես և կլորիկ փոր... Ես ուզում եմ, որ բոլորն էլ դրանցից ունենան: Այսինքն՝ այուիտի տարրերը իրականութչան մեջ :